ԱՐՑԱԽԻ ՊԵՏԱԿԱՆ ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ՁԵՌԱԳՈՐԾ ԳՈՐԳԵՐԸ ԵՒ ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐԸ (ԱԿՆԱՐԿ)

ՄԵԼԱՆԻԱ ԲԱԼԱՅԵԱՆ

ՄՈՒՏՔ

Հայ եւ օտար հնագոյն աղբիւրները միանշանակօրէն վկայում են, որ Արցախը Մեծ Հայքի մաս է կազմել վաղագոյն ժամանակներից ի վեր։ Նկարագրելով Մեծ Հայքի սահմանները, յոյն եւ հռոմէացի պատմիչները միաժամանակ վկայում են, որ Հայաստանի արեւելեան սահմանները անցնում են Կուր գետով։ Սրա լաւագոյն ապացոյցը Ներոնի ժամանակներից Հռոմում պատի վրայ փորագրուած աշխարհի մարմարէ քարտէզն է, որում Արցախը դիտւում էր որպէս հայոց պետութեան նահանգներից մէկը։ Այս իրողութիւնը արձանագրել է նաեւ Ք.ա. Ա.-Ք.Ե. Ա. դարի յոյն աշխարհագէտ Ստրաբոնը նշելով, որ Կուր գետը, հոսելով Հայաստանի հիւսիսային սահմանով, նրանից բաժանում է Աղուանքը, միաժամանակ վկայելով, որ Օրխիստենան (Արցախը) եւ Շակաշէնը (Ուտիքը) Հայաստանի նահանգներ են[1]*։ Ստրաբոնի վկայութիւնները հաստատւում են նաեւ տարբեր ժամանակների հայկական աղբիւրներով։ Այսպէս, հանրայայտ Աշխարհացոյցի համաձայն Արցախը Մեծ Հայքի* 10*րդ նահանգն էր եւ ունէր* 12 *գաւառներ։ Պատմահայր Մովսէս Խորենացին, ներկայացնելով հայ ժողովրդի եւ հայկական առանձին նահանգների ու նրանց անուանումների ծագումնաբանութիւնը, մանրամասն շարադրել է նաեւ Կուրի եւ Արաքսի միջեւ ընկած տարածքի մասին։ Նա ներկայացրել է հայոց աւանդական նախնի՝ Հայկի թոռ Սիսակի ժառանգներից Առանին կառավարիչ նշանակելու փաստը, դրանով իսկ ժառանգութիւն հաստատելով* «զդաշտն Աղուանից եւ զլեռնակողմն նորին դաշտի ի գետոյն Երասխայ մինչեւ ցամուրն, որ ասի Հնարակերտ»[2]։ *Սա մի տարածք էր, որի սահմանները ըստ Խորենացու տուեալների կազմում էին հիւսիսում՝ Կուր գետը, հիւսիս-արեւմուտքում՝ Հնարակերտ ամրոցը, հարաւ-արեւելքում Արաքս գետը, իսկ արեւմուտքում՝ Սիւնիքի հետ չփման գիծը՝ Արցախեան եւ Սեւանի լեռները։ Այն իրենից ներկայացնում էր մի եռանկիւնի, որն ընդգրկում էր Արցախ եւ Ուտիք նահանգները։*

Պատմական, այդ թւում եւ հնագիտական վերոյիշեալ փաստերը հաստատւում են նաեւ մարդաբանական տուեալներով։ Ազգագրագէտ Վ. Բունակը իր «Կովկասի Բնակչութեան Մարդաբանական Կազմը» յայտնի աշխատութեան մէջ, բազմաթիւ աղբիւրների համադրութեամբ եզրակացրել է, որ Արցախի հայերը հանդիսանում են հնդեւրոպական լեզուաընտանիքին պատկանող «արմէնոիդ» մարդաբանական տիպի ամենացայտուն ներկայացուցիչները[3]*։ Իսկ գերմանացի է. Ռէօսլէրի*[4] *կողմից Արցախի տարածքում յայտնաբերուած հնագիտական հաւաքածուի ուսումնասիրման արդիւնքում յայտնի հնագէտ Ռ. Վիրխովը գրել է.* «Բնորոշն ու վերին աստիճանի կարեւորը ընդհանուր տիպն է, իսկ մինչեւ այժմ կատարուած սակաւաթիւ պեղումներն անգամ ցոյց են

տալիս, որ Գուգարքից մինչեւ Թարթառ գետի դաշտը ապրած ազգերը մի կուլտուրայի ներկայացուցիչներ էին»[5]։ *Հնագէտ Ա. Իսրայէլեանը իր հերթին, մասնագիտական մանրակրկիտ հետազօտութիւնների շնորհիւ, որոնք վերաբերում են յատկապէս բրոնզէդարեան ժամանակաշրջանի դամբարաններին ու նրանցում պահպանուած նիւթերին, վկայել է, որ Հայկական Լեռնաշխարհի, այդ թւում նաեւ Լեռնային Ղարաբաղի տարածքում ապրող ցեղերի հաւատալիքներն ու ծիսակատարութիւնները նոյնատիպ էին*[6]։

Ինչպէս Հայկական Լեռնաշխարհում, այդպէս էլ Արցախում հնագոյն ժամանակներից ի վեր ապրել են հնդեւրոպական ծագում ունեցող հայ ժողովրդի նախնիները։ Նրանք ստեղծել են իւրօրինակ մշակոյթ, որի առանցքային մաս է կազմում նաեւ կիրառական արուեստը։ Այս բնագաւառի մի առանձին հետաքրքրութիւն ներկայացնող ճիւղ է գորգագործութիւնը, որը լայն տարածում է ունեցել նաեւ Արցախում՝ հնագոյն ժամանակներից ի վեր։ Այս մասին բաւական պատկերաւոր վկայութիւն է հաղորդել Է. դարի պատմագիր Մովսէս Կաղանկատուացին։ Պատմագիրը, նկարագրելով Աղուանից Ջիւանշիր իշխանի ողբերգական մահը, որ տեղի է ունեցել 683*ին իշխանանիստ Պարտաւ քաղաքում՝ Արցախի իշխանազուններից մէկի ձեռքով, նշում է նաեւ, որ Ջիւանշիրի զինուորները հետապնդում են նրան ու հասնելով Արցախի նրա հայրենի ապարանքը, թալանում են այն, իրենց հետ տանելով* «Եւ զմետաքսառէչ եւ զկերպասանիւթ դիպակս եւ զգոյնագոյն կապերտս զոսկի եւ զարծաթ եւ զընտիր ընտիր կահուց ըսպասուց աւար առեալ…»[7]։

Կաղանկատուացու յիշեալ վկայութիւնը ուշագրաւ է եւ կարեւորւում է նաեւ մէկ այլ տեսանկիւնից։ Գորգագործութեան բնագաւառի գրեթէ բոլոր ուսումնասիրողները այն տեսակէտն են արտայայտել, որ հայկական «կարպետ» անուանը առաջինը հանդիպում են հայկական աղբիւրներում եւ այն էլ «կապերտ» տարբերակով։ Նրանք միաժամանակ, որպէս աղբիւր, մատնանշում են Ե. դարում հայերէն թարգմանուած Աստուածաշունչը, որը բազմիցս օգտագործում է կապել բայը։ Փաստօրէն նոյն «կապերտ» ձեւով արդէն երկրորդ յիշատակութիւնը հանդիպում ենք նաեւ երկու դար յետոյ՝ Է. դարում Կաղանկատուացու մօտ։ Պատմագրի յիշատակած «գոյնզգոյն կապերտները» արտայայտութիւնից կարելի է նաեւ եզրակացնել, որ «կապերտները» արդէն իսկ լայն տարածում ունէին Է. դարում նաեւ Արցախում եւ Ուտիքում։

«Կապերտ» բառը, ըստ հետազօտողների, առաջացել է «կապ» բառից, որի պատճառով էլ սկզբնական շրջանում գործածական է եղել հենց «կապերտ» տարբերակը։ Իսկ յետագայում առաւել լայն հնչեղութիւն է ստացել «կարպետ» տարբերակը, դիւրահնչութեան պատճառով, որն էլ փոխանցուել է նաեւ եւրոպական լեզուներին։

ԺԳ. դարի հայ մատենագիրներից Կիրակոս Գանձակեցին իւրայատուկ հիացմունքով է նկարագրել հայ կնոջ ձեռքի աշխատանքն ընդհանրապէս, այն անուանելով «իմաստութիւն ոստայնանկութեան եւ հանճար նկարակերտութեան»[8]։ *Ի դէպ, պատմագրի այս գնահատականը վերաբերում է հենց Արցախի ձեռագործ արուեստին։ Նկարագրելով Արցախի Հաթերքի Վախթանգ իշխանի կողմից Գետիկի հռչակաւոր եկեղեցու կառուցման փաստը, Գանձակեցին միաժամանակ վկայել է, որ նոյն Վախթանգ իշխանի կին Արզուխաթունը* «… ի մազոյ այծից կակղագունաց՝ ներկեալ պէսպէս եւ զանազան, գործ քանդակա-

կերպ եւ նկարեալ պատկերօք, ճշգրտագոյն հանուածովք՝ տնօրինականօք փրկչին եւ այլ սրբոց, որ հիացուցանէր զտեսողն …»[9]։

Արցախի հայ կանանց վարպետութիւնն ու բարձր ճաշակը մատնանշող բազմաթիւ յիշատակութիւններ են պահպանուել նաեւ ժողովրդական բանաւոր աւանդազրոյցներում ու հեքիաթներում։ Ղազարոս Աղայեանի «Անահիտ» հեքիաթը, որի հերոսներն են արցախահայութեան կողմից շատ սիրուած Անահիտը եւ Վաչագանը, վկայում է Արցախում ընդհանրապէս արհեստների ու մասնաւորապէս՝ ձեռագործութեան խոր արմատների մասին։

Պատմական Հայաստանի տարածքում յայտնաբերուել են հնագոյն ժամանակներին վերաբերող կարպետների մասեր, որոնց վրայ առկայ են տարբեր պատկերներ։ Արցախի տարածքում յայտնաբերուել են նաեւ հնագոյն գորգագործական գործիքներ՝ ոսկրեայ կտուտիչներ, որոնք վկայում են վաղագոյն ժամանակներից ի վեր ընդհանրապէս Հայաստանում եւ մասնաւորապէս նաեւ Արցախում մանածագործութեան ու յատկապէս գորգագործութեան գոյութեան մասին։ Արցախի Պետական Պատմաերկրագիտական Թանգարանում գտնուող այդ կտուտիչները Թանգարանի մասնագէտների եւ մեր կարծիքով, պատկանում են Ք.ա. Բ.-Ա. հազարամեակներին։

Միջնադարից սկսած գորգագործութիւնը թեւակոխել է միանգամայն նոր փուլ։ Այն աչքի է ընկնում թէ՛ իր կատարման որակով եւ թէ՛ զարդանախշերի բազմազանութեամբ ու կատարելութեամբ։ Ուշագրաւ է նաեւ այն փաստը, որ պահպանուած հայկական վիմագրերում գորգի մասին առ այսօր ամենավաղ յիշատակութիւնը կրկին հանդիպում է հենց Հայոց Արեւելից Կողմանցում։ Մասնաւորապէս նախկինում Հայոց Արեւելից Կողմանց Ուտիք նահանգ ներառուած Տաւուշ գաւառի[10] Կապտավանք եկեղեցու 1242-43ի վիմական արձանագրութեան մէջ յիշատակութիւն կայ «գորգ»ի մասին։ Որոշ հետազօտողների կարծիքով այն «գորգ» անուանման առաջին յիշատակութիւնն է[11]։

Գորգագործութեան մէջ օգտագործուել է ոչխարի բուրդ, այծի փափուկ մազ, բամբակ, թանկարժէք գորգերում՝ նաեւ մետաքսաթել։ Թել ներկելու համար օգտագործուել են հիմնականում բուսական ներկեր՝ տորօն, դեղնածաղիկ, ընկոյզի եւ սոխի կեղեւ, անանուխի արմատներ, թերթաքարեր եւ ընդհանրապէս ամենատարբեր բոյսեր, որոնք ամրացուել են հանքային նիւթերով (չիբ, կիր)։ Ք.ա. Ե. դարի յոյն պատմիչ Հերոդոտոսը գրում է, որ Կովկասի բնակիչները բոյսերից ստացուած ներկերով ներկում էին բուրդը, որից յետոյ նրանից գործում տարբեր գործուածքներ, որոնց գոյնը երբեք չի խամրում, ոչ ժամանակի ընթացքում եւ ոչ էլ ջրից[12]։ Հնագոյն, վաղ-միջնադարեան ու միջնադարեան բազմաթիւ աղբիւրներ վկայում են, որ միջազգային առեւտրում Հայաստանը յայտնի էր յատկապէս ներկերով, որոնց մէջ առաջնակարգ տեղը գրաւում էր «որդան կարմիր» ներկը։ Այն ամենալայն կիրառութիւն է ունեցել նաեւ գորգագործութեան մէջ։

ԱՐՑԱԽԵԱՆ ԳՈՐԳԵՐԻ ԻՐԱՑԱՏԿՈՒԹԻՒՆՆԵՐ

Ըստ հայկական գորգագործութեան խորագիտակ ուսումնասիրողներից Վ. Թեմուրճեանի, Հիւսիսային Արցախի Բանանց գիւղում է գործուել յիշատակագրութիւն ունեցող հայկական հնագոյն գորգերից մէկը։ Գորգի վրայ կատարուած արձանագրութեան մի մասը խուսնացած եւ անընթեռնելի է, բայց եւ

պահպանուած մասը վկայում է, որ գորգը գործուել է ի յիշատակ Հռիփսիմէ-ին, Կիրակոս Բանանցեցու կողմից եւ թուագրուած է՝ 1202[13]։ Այն արցախեան «Եռախորան» տիպին պատկանող գորգ է՝ հետաքրքիր գունային երանգներով ու անցումներով եւ ներկայումս պահպանւում է Վիեննայի Արդիւնաբերութեան Պատմութեան Թանգարանում։ Նրա մասին մեզ յայտնի առաջին հրատարակողը համարւում է յայտնի արեւելագէտ Ալոիզ Ռիգլը 1895ին[14]։

Երուսաղէմի Ս. Յակոբեանց Վանքում է պահւում Գանձասարի Հայ Աղուանից Ներսէս կաթողիկոսի պատուէրով Արցախի Ջրաբերդ գաւառի Զարէքի վանքում գործուած եւ հայերէն «յիշեցեք մաքրափայլ յաղօթս ձեր Ներսէս մեղապարտ կաթողիկոս Աղուանից է պատճառ սմին [արուած] լոյս ընկալ Չարեքու Սբ. անապատին ՌՃՁ թուին»[15] յիշատակագրութիւն ունեցող գորգը։

ԺԹ. դարի երկրորդ կէսերից եւ յատկապէս Ի. դարի սկզբներից հայ ժողովրդի շրջանում վերստին նոր վերելք ապրեց գորգագործութիւնը։ Մինչեւ այդ՝ մինչեւ ԺԹ. դարի կէսերը քաղաքական աննպաստ պայմանների հարկադրանքով տնտեսական կեանքը ընդհանուր առմամբ եւ, մասնաւորաբար նաեւ արհեստները, բնականաբար անկում են ապրել։ Միաժամանակ, ԺԹ. դարի Բ. կէսից, համաշխարհային շուկայում գորգը դարձաւ ամենաեկամտաբեր ու մեծ պահանջարկ վայելող ապրանքներից մէկը, ինչն էլ իր հերթին նպաստեց հայկական գորգերի լայնածաւալ տարածմանը։

Տարբեր ուսումնասիրողներ[16] եկել են այն եզրակացութեան, որ ամենագեղեցիկ կարպետներն ու գորգերը հանդիպում են Արցախում, Զանգեզուրում եւ Հայաստանի լեռնային միւս շրջաններում։ Ընդհանրութեան մէջ կարելի է նշել, որ հայկական ծագում ունեցող գորգերը աչքի են ընկնում իրենց առանձնայատուկ հիւսուածքով, գործուածքի խտութեամբ, խաւի բարձրութեամբ ու ողորկութեամբ եւ, իհարկէ, նաեւ ոճական առանձնայատկութիւններով։ Դա նախ եւ առաջ դրսեւորւում է գունային համադրութիւնների ու անցումների մէջ։ Գեղեցիկ ձեւաւորումներով կատարուած պատկերներն այնքան բազմազան են ու առատ խորհրդանշաններ են պարունակում, որ կարծես լուսաւորում են շրջապատը, միաժամանակ թափանցելով մարդու ներաշխարհ՝ ստեղծելով հեքիաթային տրամադրութիւն։

Հայ կնոջ կողմից գրեթէ բոլոր ժամանակներում գորգերում արտացոլուած ու ամենասիրուած պատկերներից է կեանքի ու բնութեան յաւերժութիւնը խորհրդանշող «կենաց ծառը», որով նա աւանդում էր սերունդներին իր հոգու ցանկութիւններն ու երազանքները։ Դա միաժամանակ վկայութիւն է անգամ ամենածանր վիճակում յայտնուած ժողովրդի անսահման լաւատեսութեան, յոյսի ու յաւերժութեան գաղափարի առկայութեան մասին։

Աղբիւրները վկայում են, որ յատկապէս Շուշի գաւառում բաւական զարգացած էր գորգագործութիւնը։ Նոյնինքն Շուշիում, նոյնիսկ բացուել էր յատուկ դպրոց՝ գորգագործական արհեստը բարձր մակարդակով ուսուցանելու նպատակով։ Երուանդ Լալայեանը գրում է, որ Շուշիում «թէեւ առանձին գործարաններ չկան, բայց շատ տներում գործում են գորգ, կարպետ, ձիու չուլ եւ այլն»[17]։ Ազգագրագէտի վկայութեամբ բուրդ գզող, թել մանող եւ կարպետագործ կնոջ օրավարձը ԺԹ. դարի վերջերին կազմում էր 10-20 կոպէկ[18]։ Պարզապէս կարելի է նշել, որ գորգագործութիւնը արցախցի կնոջ սիրած արհեստն է

եղել, իսկ գորգը կամ կարպետը՝ իւրաքանչիւր հայ ընտանիքի կենցաղի կարեւոր մաս։ Կատարման որակով եւ զարդանկարի բարդութեամբ ձեռագործ գորգերը անգերազանցելի են, որի հետեւանքով էլ նրանց արժէքը միշտ էլ բարձր է եղել։ Այդ է պատճառը, որ գորգարուեստի գիտակները գորգագործական մշակոյթը իրաւամբ համարում են հայ բազմադարեան մշակոյթի եւ ազգային ժառանգութեան կարեւորագոյն մաս։

Բոլոր ժամանակներում գորգագործութեամբ բացառապէս զբաղուել են հայ կանայք։ Զարդանախշերի համար յատուկ գծագրեր գոյութիւն չունէին։ Զարդանախշերը հիմնականում կանանց ստեղծագործ մտքի ու ճաշակի արդիւնք էին հանդիսանում, որոնք փոխանցւում էին սերնդից սերունդ։ Բայց եւ միաժամանակ այդ փոխանցումները կատարւում էին առաւել կատարելագործուելով եւ նոր որակներ ձեռք ձգելով։ Հմուտ գորգագործների մօտ շատ դէպքերում զարդանախշերը ծնւում էին հենց դազգահի առաջ՝ աշխատանքի ընթացքում։ Երբեմն զարդանախշերի ընտրութեան վրայ որոշակի ազդեցութիւն են ունեցել նաեւ ձեռքի տակ եղած թելերի գունային երանգները։ Դրանք յատկապէս կարեւոր էին գորգի դաշտի գունային ընտրութեան հարցում։ Արցախի ոչ միայն տարբեր բնակավայրերում գործուած գորգերն են իրարից տարբերւում, այլեւ նոյն բնակավայրում տարբեր գորգագործների գործածները։ Դա հիմնականում բացատրւում է նրանով որ զարդանախշերի ընդհանուր տիպը պահպանելով հանդերձ, իւրաքանչիւր, յատկապէս հմուտ գորգագործ, իր նորամուծութիւններն ու մտայղացումներն է արտացոլել, որի արդիւնքում ստեղծուել են նոյն խմբին պատկանող, բայց եւ զարդանախշերի բազմազանութիւն ու բազմերանգութիւն ունեցող գորգեր։

Գորգագործութեան ընորոշ կողմերից էր նաեւ չափազանց մեծ պատասխանատուութիւնը գործուածքի որակի, զարդանախշերի համաչափութեան, պատկերների գեղեցիկ ու հնարաւորինս ճիշդ արտացոլման հանդէպ։ Տարածուած է եղել նաեւ միեւնոյն զարդանախշը գորգի տարբեր մասերում տարբեր գոյներով արտացոլելը։ Դա յատկապէս վերաբերում է մի քանի վարդեակներ պարունակող գորգերին։ Սակայն գոյների թէ՛ ընտրութիւնը եւ թէ՛ անցումները նոյնպէս կատարուել են բարձր ճաշակով։

Մեծ չափերի գորգեր ու կարպետներ գործելը պահանջում էր ֆիզիկական մեծ աշխատանք, որի պատճառով էլ այն իրականացւում էր կանանց որոշակի խմբի կողմից։ Երբեմն գորգերի երկարութիւնը նոյնիսկ անցնում էր 5-6 *մետրից եւ այս դէպքում առանձնակի կարեւորութիւն էր ստանում նաեւ ծայրերի ամրութիւնն ու հաւասարութիւնը։ Գորգերի ընորոշ կողմերից ու առանձնայատկութիւններից է նաեւ գործուածքի խտութիւնը։ Արցախեան գորգերի միջին խտութիւնը* 10 *սմ*^{2}*ի վրայ սովորաբար կազմել է* 30-40 *հանգոյց։*

Յատկանշական է, որ Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան յուշարձանների վրայ պատկերուած է նաեւ արցախեան գորգ, ինչը վկայութիւն է կիրառական այս արուեստի նկատմամբ բոլոր ժամանակներում հայ ժողովրդի ունեցած անսահման սիրոյ ու մեծարանքի։

Արցախեան գորգերի ու կարպետների որակական իւրայատկութիւններից մէկը յատկապէս տեղական բրդի մշակմամբ ստացուած թելի ողորկութիւնն ու նրբութիւնն էր, ինչը երբեմն մետաքսաթելի տպաւորութիւն է թողնում։ Բուրդը մանրակրկիտ մշակւում էր, լուացւում, այնուհետեւ յատուկ գործիքով

(գզրիչ) այն ուղղւում ու փափկացւում էր, որից յետոյ իլիկով ու ճախարակով մանւում։ Մանուած թելի ներկման գործընթացը նոյնպէս ուշադրութեան յատուկ առարկայ էր, քանի որ ներկերի ընտրութիւնը, ամրութիւնը, փայլքը եւս չափազանց կարեւոր դեր ունէին գործուածքի որակի ու գեղեցկութեան համար։ Արցախեան գորգերը նաեւ աչքի են ընկնում առաւելապէս արտայայտիչ գունային երանգներով, որի պատճառը հաւանաբար այն է, որ Արցախում բոլոր ժամանակներում առաւել նախընտրելի են եղել վառ, բայց միեւնոյն ժամանակ հանգստութիւն ու խաղաղ տրամադրութիւն հաղորդող գոյները։

Արցախեան գորգերին բնորոշ են նաեւ բուսական ու կենդանական իւրօրինակ ոճաւորումներով պատկերների բազմազանութիւնն ու միաժամանակ դրանց ներդաշնակութիւնը։ Յատուկ տեղ ունեն յատկապէս երկրաչափական ձեւաւորումներով գորգերը։

Արցախեան գորգերի ամենատարածուած տեսակներից են «Օձագորգ»երը։ Մասնագիտական շրջանակներում դրանք յայտնի են որպէս «Խնձորեսկ» անունով վիշապագորգեր։ Այս խմբի գորգերը աչքի են ընկնում իրենց իւրայատկութիւններով, ուշագրաւ են զարդանախշերի համադրութեամբ ու նրանց հաղորդած բովանդակութեամբ. կենտրոնում արիական խորհրդանշանն է՝ կեռխաչը, որից ելնում են օձերը՝ հիմնականում թուով ութը։ Ի դէպ, Վահրամ Թաթիկեանը իր Արցախի Տոհմագորգերը գրքում հետաքրքիր տեղեկութիւն է հաղորդում, նշելով, որ 1960ականներին իր շրջագայութեան ժամանակ Արցախի գիւղերից մէկում հանդիպել է օձագորգի եւ այն լուսանկարելու թոյլատրութիւնը մեծ դժուարութեամբ է ստացել, այն պատճառաբանութեամբ, որ կեռխաչի նշանի պատճառով «կոմունիստները» կարող են մեղադրել գորգի տէրերին, քանի որ արիական ազգերի ծագումը խորհրդանշող կեռխաչը նաեւ հիտլէրեան Գերմանիայի խորհրդանշանն էր։ Հեղինակին յայտնել են նաեւ, որ Բ. Աշխարհամարտի տարիներին այդ տիպի գորգերի մի մասը ուղղակի ոչնչացուել է[19]։ Սակայն առաւելապէս ընդունուած է այն տեսակէտը, որ քառանկեան մէջ ներառուած կեռխաչը խորհրդանշում է աշխարհաստեղծումը, իսկ նրա շուրջը տարածուող ութ օձերը պահպանում են նրան։ Գորգագէտների կարծիքով կեռխաչի խորհրդանշանով գորգերը առաւել տարածում են ունեցել հենց Արցախում, ինչպէս նաեւ Ուտիքում, Գուգարքում եւ Սիւնիքում։ Միաժամանակ յատկանշական է, որ օձի խորհրդանշանը առկայ է նաեւ կիրառական արուեստի այլ ճիւղերում եւ այն էլ յատկապէս նախաքրիստոնէական ժամանակներում։ Յայտնի է նաեւ, որ հայ իրականութեան մէջ հնագոյն ժամանակներից օձը դիտւում էր որպէս իմաստնութեան խորհուրդ եւ բրոնզէ, արծաթէ ու ոսկէ օձակերպ մատանիները, ապարանջաններն ու այլազան զարդարանքները առանձնայատուկ ու լայն կիրառութիւն ունէին։ Սա եւս մէկ վկայութիւն է գորգագործութեան եւ կիրառական արուեստի միւս ճիւղերի միջեւ սերտ կապերի առկայութեան մասին։

Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում արցախեան «Արծուագորգ»երը։ Ըստ պատմական աղբիւրների, դեռեւս Արտաշէսեան Հարստութեան (Ք.ա. Բ.-Ա. դդ.) ժամանակներից արծիւը խորհրդանշում էր հզօրութեան գաղափարը։ Այսօր էլ արցախեան արծուագորգերը համընդհանուր հիացումի են արժանանում եւ ունեն մեծ արժէք։ Ըստ էութեան կարելի է միանշանակօրէն եզրակացնել, որ այդ գորգերը արցախեան գորգագործութեան

թերեւս ամենադասական տիպն են ներկայացնում։ Արծուագորգերը յայտնի են նաեւ «արեւագորգ» անունով, որը հիմք է տալիս նաեւ ենթադրելու, որ արծիւը մարմնաւորում էր նաեւ արեւը, ինչն էլ կապուած է նախաքրիստոնէական շրջանում հայերի մօտ շատ տարածուած արեւի պաշտամունքի հետ։

Հանրայայտ փաստ է, որ Հայաստանը հանդիսանում է «Վիշապագորգ»երի հայրենիքը։ Գորգի այս տեսակը աչքի է ընկնում բովանդակային հարուստ բազմազանութեամբ։ Վիշապի արտացոլումը գորգերի վրայ բացատրւում է նրանով, որ հնում վիշապը ոչ թէ մարմնաւորում էր չար ուժերին, այլ առաւելաբար ուժ եւ հզօրութիւն էր արտայայտում ու դրանով փորձում էին հակադրուել չար ուժերին՝ վտարելով նրանց իրենց օջախներից։ Արցախում գործուած վիշապագորգերը իրենց հերթին ունեն իւրայատկութիւններ, որոնցից կարելի է նշել վիշապների մի քանի գլխանի եւ բազմոտանի պատկերումը։

Հին ժամանակներում մարդկանց մօտ տիրապետող էր այն գաղափարը, որ պաշտամունքային տարբեր խորհրդանշաններով գորգերը յաջողութիւն ու բարօրութիւն են բերում, այդ պատճառով դրանք կախում էին տան պատին, ընդ որում ամենագլխաւոր մասում։ Նաեւ նրա վրայ կախում էին զէնքեր, իսկ աւելի նոր ժամանակներում՝ նաեւ նախնիների նկարները։ Վերոնշեալ գորգերը յատակին փռելը սրբապղծութիւն էր համարւում։ Տարէց արցախցիներից շատերը վկայում են նաեւ, որ նախկինում ընտանեկան գորգը արգելւում էր գերդաստանից հանելը, որովհետեւ այն կարող էր դժբախտութիւն բերել։ Սա եւս միանշանակօրէն վկայում է, որ գորգերը նաեւ պաշտամունքի տարրեր են պարունակել իրենց մէջ թէ՛ նախաքրիստոնէական եւ թէ՛ յետագայ ժամանակներում։ Պատահական չէ, որ դրանք մեծ կիրառութիւն են ստացել նաեւ հենց եկեղեցում։

Քրիստոնէական հաւատքն իր արտացոլումն է գտել նաեւ գորգագործութեան մէջ։ Դրա վառ վկայութիւնն են հայկական գորգերի մեծ մասում առկայ խաչի ամենատարբեր ձեւաւորումներով պատկերները, ինչպէս նաեւ հայկական «Տ» տառը, որ նշանակում է «Տէր», այսինքն «Աստուած»։ Յատկապէս այս վերջինը հանդիպում է հայկական գրեթէ բոլոր գորգերում ու նաեւ կարպետներում եւ եւս մէկ վկայութիւն է որ հայ գորգագործները դրանով ցանկացել են արտացոլել իրենց հայկական ծագումն ու քրիստոնէական հաւատքը։ Արցախի Պետական Պատմաերկրագիտական Թանգարանի գորգերի հաւաքածուի մէջ մեծ թիւ են կազմում պաշտամունքային, այդ թւում եւ քրիստոնէական տարբեր խորհրդանշաններով գորգերը, որոնց տարածուած տեսակներից են «Խաչագորգ» եւ «Խորանաւոր» գորգերը։

Զարդանախշերի մէջ գերակշռող են նաեւ աստղերի, մարդկային փոքրածաւալ կերպարների, տարաբնոյթ թռչունների ու կենդանիների խորհրդաւոր պատկերներն ու դրանց հետաքրքիր համադրութիւնները։ Գորգագէտների կարծիքով թերեւս հենց հայկական գորգերը մահմեդականների գործած գորգերից տարբերւում են յատկապէս նրանով, որ նրանցում բոլոր պատկերները՝ Աստծոյ, արեւի, աստղերի, մարդկանց, վիշապի, կենդանիների, թռչունների եւն., արտացոլուած են խորհրդանշանների ձեւով։ Այս երեւոյթը չափազանց ակնառու է նաեւ արցախեան գորգերում։

Մեծ թիւ են կազմում նաեւ հայերէն յիշատակագրութիւն ունեցող գորգերն ու կարպետները, որոնք ամենավառ վկայութիւնն են դրանց հայկական

ծագման մասին։ Որպէս կանոն գործւում էր գործելու թուականը եւ գորգագործի անունը, իսկ որոշ դէպքերում նշւում էր գորգի տիրոջ անունը։ Վերջիններս հիմնականում այն գորգերն են, որոնք գործուել են որպէս նուէր կամ յիշատակ։ Ցաճախ այդպիսի յիշատակագրութիւնները կատարւում էին համառօտ, նշելով միայն անուն-ազգանուան սկզբնատառերը։

Արցախի Պետական Պատմաերկրագիտական Թանգարանի ձեռագործի հաւաքածու ընդգրկուած են նաեւ կարպետներ, ձեռագործ անկողնապարկեր, աղամաններ, վարագոյր, խուրջիններ, ձիու չուլ, եւն.։ Արցախեան ձեռագործ կարպետները նոյնպէս ունեն իւրայատկութիւններ եւ, ի տարբերութիւն գորգերի, ներկայումս աւելի մեծ թուով են պահպանուած։ Դրանք կրում են զանազան ու հարուստ զարդանախշեր՝ հետաքրքիր գունային անցումներով ու երանգներով։ Ընդհանրապէս կենցաղում կարպետները ամենայայն ու ամենատարբեր կիրառութիւն են ունեցել, ինչով էլ մեծապէս պայմանաւորուած են թէ՛ նրանց չափսերը եւ թէ՛ զարդանախշային ձեւաւորումները։ Կարպետները հիմնականում նախատեսւում էին յատակին փռելու համար, իսկ առանձնակի հարուստ զարդանախշերով կարպետները նաեւ կախում էին պատերին, ծածկում անկողինները եւն.։ Վերջինները հիմնականում փոքր չափերի կարպետներ էին։

Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում նաեւ ասեղնագործ կարպետները, որոնք ներկայիս շատ քիչ են այլեւս հանդիպում։ Դրանք աչքի են ընկնում իրենց իւրայատուկ գեղեցկութեամբ ու առաւել նուրբ են, քանի որ գործուած են միայն յատուկ մշակուած եւ մեծաւ մասամբ բամբակեայ կամ մետաքսեայ թելերով։

Լայն տարածում են ունեցել նաեւ անկողնապարկերը, խուրջինները, պարկերը (ցորենի եւ գարու համար նախատեսուած), աղաքսակները, պայուսակները կամ ուսապարկերը, մեզարները եւն.։ Վերջիններս հիմնականում օգտագործուել են հաց պատրաստելու համար, մանաւանդ նրա վրայ շարում էին խմորի գնդիկները։ Մինչեւ հիմա էլ Լեռնային Ղարաբաղի գիւղերում այդ կիրառումը պահպանել են մեզարները։ Հետաքրքրական է նաեւ բրդից աղաքսակներ գործելու երեւոյթը։ Աղը խոնաւութիւնից քարանում է, իսկ բուրդը խոնաւութիւնը ներծծելու յատկութիւն ունի, որի պատճառով էլ աղաքսակները յատուկ գործում էին բրդեայ թելով։ Առանձնակի հետաքրքրութիւն են ներկայացնում ասեղնագործ անկողնապարկերն ու խուրջինները, որոնք բնորոշւում են զարդանախշերի գեղարուեստական իւրայատուկ ոճաւորմամբ ու արտակարգ հարստութեամբ։

Ամերիկացի յայտնի հաւաքորդ եւ գորգագործութեան բնագաւառի նշանաւոր գիտակ Ջիմ Ալլէնը բարձր է գնահատել հայկական գորգերը եւ ընդհանրապէս հայկական գորգագործութիւնը, միաժամանակ շեշտելով Կովկասում հնագոյն ժամանակներից ի վեր այդ բնագաւառում հայերի ունեցած մեծագոյն դերը[20]։

ԱԴՐԲԵՋԱՆԱԿԱՆ ՆԿՐՏՈՒՄՆԵՐ

301ին Հայաստանում քրիստոնէութիւնը պետական կրօն հռչակուելուց յետոյ խաչի խորհրդանշանը ընդհանուր առմամբ լայն տարածում էր ստացել հայ միջնադարեան մշակոյթի բոլոր բնագաւառներում՝ քանդակագործութեան,

մանրանկարչութեան, տարբեր զարդարանքների, ձեռագործութեան եւ գորգագործութեան մէջ, ինչը եւս վկայութիւն է քրիստոնէութեան ամրապնդման ու տարածման մասին։ Սակայն «ադրբէջանցի» անունով ներկայացող թուրք կեղծ մասնագէտները այստեղ էլ կանգ չեն առնում իրենց «նուաճողական» ծրագրերի առջեւ եւ, խեղաթիւրելով իրականութիւնը, բնիկ հայ ժողովրդի բազում դարերի ընթացքում ստեղծած եւ իր հիմքով քրիստոնէական մշակոյթի անտրոհելի մէկ մասը համարուող քաղաքակրթութեան մի մասը ոչնչացնելուց, իսկ միւս մասը «սեփականելուց» յետոյ, ամէն կերպ փորձում են Արցախում եւ Ուտիքում քրիստոնեայ հայերի գործած գորգերն ու կարպետները եւս «սեփականել»։ Այս իմաստով ուղղակի հակագիտական եւ, ընդհանրապէս, թիւրիմացութիւն պէտք է համարել Լ. Քիարիմովի *Azerbaydjanskii Kover* բազմահատոր ու ստուարածաւալ աշխատութիւնը[21]։ Աշխատութիւնը ոչ միայն գորգագործական-մշակութաբանական տեսանկիւնից է թիւրիմացութիւն, այլեւ՝ պատմաքաղաքական։

Աշխատութեան երկրորդ հատորում, մէջբերումներ կատարելով անգլիացի յայտնի արեւելագէտներ Կ. Վիլսոնի եւ Ա. Պոուպի Թեհրանում հրատարակուած աշխատութիւններից[22], Քիարիմովը՝ վերոյիշեալ հեղինակների իրանական բարձրարժէք նիւթական մշակոյթի մասին կատարած արտայայտութիւնները ներկայացնում է որպէս ներկայիս Ադրբէջանի ժողովրդի մշակոյթը։ Սակայն իրանական բրոնզէդարեան մշակոյթը ի՞նչ կապ ունի միայն ԺԵ. դարից յետոյ Իրանի Ատրպատականի տարածքում յայտնուած աղկոյունլու եւ կարակոյունլու թուրքմէնական ծագմամբ ցեղերի հետ, որոնք միայն 1918ից սկսեցին իրենք իրենց անուանել ադրբէջանցի, բոլորովին անհասկանալի է։ Ի դէպ, ներկայացնելով աղկոյունլու եւ կարակոյունլու միջինասիական թուրքական ծագում ունեցող ցեղերի ԺԵ. դարում Իրանում յայտնուելու եւ իրենց տիրապետութիւնը հաստատելու ժամանակաշրջանը, Քիարիմովը անթաքոյց ուրախութեամբ նշում է, որ «… սկզբում կարակոյունլուների, իսկ յետոյ աղկոյունլուների կառավարման շրջանում մեծ ծաղկում է ապրել ադրբէջանական մշակոյթը եւ այդ շրջանում երկրի մայրաքաղաքը եղել է Թաւրիզը»[23]։ Յատկանշական է որ ընդհանրապէս, գրքի շարադրանքի նշուած հատուածում մեծաւմասամբ նկարագրուած է Իրանի մշակոյթը, որը անհասկանալիօրէն վերագրուած է «ադրբէջանական»ին։

Պատմութեան այդ աստիճան խեղաթիւրման չնորհիւ թուրք հեղինակը մի կողմից սեփականում է Իրանի պատմութիւնը եւ մշակոյթը, իսկ միւս կողմից, սիրայօժար օգտուելով հայ միջնադարեան մատենագիրների երկերից, նոյնպէս է վարւում նաեւ հայկական մշակոյթի հետ։ Այսպէս, նոյն հատորում, օգտուելով հայ պատմագիր Սեբէոսի հաղորդած տեղեկութիւններից, որոնք վերաբերում են 628ին Բիւզանդիայի կայսր Հերակլի Գանձակ կատարած արշաւանքին ու այստեղից տարած գորգերին, չգիտես ի՞նչ հիմքով, այնուհետեւ եզրակացութիւններ է կատարում, աւելացնելով, որ «արաբները անընդհատ արշաւանքներ կատարելով Ադրբեջանի վրայ, իրենց հետ տանում էին մեծ թուով ընտիր գորգեր ու գործուածքներ»[24]։ Սեբէոսի Պատմութիւնի մէջ «Ադրբէջան» եզրը չի գործածուած, փոխարէնը անշուշտ, «Ատրպատական» տեղանունն է յիշատակուած, իսկ ակնյայտ փաստ է, որ Ատրպատականը Պարսկաստանի վարչական խոշոր միաւորներից է եղել։ Քիարիմովը նոյն ձեւով է վերաբերւում նաեւ Կա-

ղանկատուացու վերոնշեալ աշխատութեան հետ։ Պատմական կարեւոր նշանակութեամբ այդ երկում ընդհանրապէս գոյութիւն չունի «Ադրբեջան» եզրը՝ միանգամայն հասկանալի պատճառով։ Այնուհետեւ եւս, իր աշխատութեան միւս հատուածներում էլ, թուրք «արուեստաբանը» ջանք ու եռանդ չի խնայել անգամ հայատառ գրութիւններով ու քրիստոնէական խորհրդանշաններով եւ, բնականաբար, հայ կանանց ձեռքով գործուած գորգերը նոյնպէս ներկայացնելու իբրեւ «ադրբեջանական»։

*

Հայ ժողովրդի, այդ թւում եւ արցախահայութեան պատմութիւնը լի է եղել արհաւիրքներով, որոնց արդիւնքում հայ ժողովուրդը զրկուել է բազում դարերի ընթացքում իր իսկ ստեղծած հոգեւոր ու նիւթական ժառանգութիւնից։ 1921ին Խորհրդային Ադրբեջանին բռնակցուելուց յետոյ Արցախում շարունակուել է մշակութային թալանն ու ջարդը։ Լեռնային Ղարաբաղի Ինքնավար Մարզում, ինչպէս նաեւ քաղաքական նկատառումներով Մարզից դուրս թողնուած պատմական Արցախ եւ Ուտիք նահանգների, այսինքն Լեռնային ու Դաշտային Ղարաբաղի հայկական գիւղերում պահպանուած ձեռագործ գորգերը հաւաքելու նպատակով Բաքուից յատուկ հրահանգներով ուղարկուած առանձին գործակալներ շրջել են Ղարաբաղի զուտ հայկական բոլոր գիւղերն ու բնակչութիւնից հաւաքել հին ձեռագործ գորգերը՝ դրանց դիմաց յանձնելով իրենց գորգագործարաններում արտադրած «նոր» գորգեր։ Նման «փոխանակութիւնը» խաբէութեան եւ թալանի ակնյայտ դրսեւորում էր։ Հենց այդպիսի քաղաքականութեան շնորհիւ էլ այսօր Բաքուում ստեղծուել է գորգի թանգարան, որով ադրբեջանցիք ներկայանում են աշխարհին, որպէս թէ հին մշակոյթ ունեցող ժողովուրդ, իսկ Արցախում, որտեղ եթէ մինչեւ 1920ականները գրեթէ ամէն ընտանիքում առկայ էր առնուազն մէկ, իսկ շատ դէպքերում՝ մէկից աւելի ձեռագործ գորգեր, կարպետներ, ապա ներկայ դրութեամբ անգամ կան բնակավայրեր, որտեղ այլեւս գոյութիւն չունի թէկուզեւ որեւէ մէկ նմուշ։ Այնպէս որ Արցախում պահպանուածը ստեղծածին համեմատ աննշան է, բայց եւ չափազանց արժէքաւոր։ Ներկայ դրութեամբ աշխարհի տարբեր երկրներում առանձին անհատ-հաւաքողների ու թանգարանների հաւաքածուներում իրենց արժանի տեղն ունեն արցախեան ձեռագործ գորգերն ու կարպետները։

ՊԱՏՄԱԵՐԿՐԱԳԻՏԱԿԱՆ ԹԱՆԳԱՐԱՆԻ ԳՈՐԳԱՅԻՆ ՅՈՒՅԱՆՄՈՒՇՆԵՐԸ

Արցախի Պետական Պատմաերկրագիտական Թանգարանը հիմնադրուել է 1939ին, որպես Հնագիտական Թանգարան։ 1950ին այն վերափոխուել է որպէս ԼՂԻՄ Երկրագիտական Թանգարան եւ միաժամանակ հիմնադրուել է նաեւ Ազգագրութեան Բաժինը։ Իր գոյութեան ողջ ժամանակահատուածում այն համալրուել է տարաբնոյթ ազգագրական նիւթերով, այդ թւում եւ գորգերով ու կարպետներով, մի գործընթաց, որ ներկայ ժամանակներում եւս շարունակւում է։ Ներկայ դրութեամբ Թանգարանի ազգագրութեան պահոցում ներառուած են 68 *հնաոճ ձեռագործ գորգեր,* 78 *կարպետներ։*

Արցախի Պատմաերկրագիտական Թանգարանի Ազգագրութեան Բաժնում զետեղուած են ԺԹ. դարին պատկանող գորգագործական դազգահ եւ գործիքներ, որոնց հարեւանութեամբ ցուցադրուած են նաեւ հիմնականում ԺԹ. դարի արցախեան ձեռագործ գորգեր, խուրջիններ, մաֆրաշներ (անկող-

նապարկ), աղամաններ։ Ի դէպ, Արցախի գիւղերում մինչեւ 1960ականները տնային գորգագործութիւնը դեռեւս առկայ էր, սակայն աւելի շատ գործում էին ձեռագործ կարպետներ, ընդ որում տեղական բուրդը տակաւին ներկելով հիմնականում բուսական ներկերով։ Տնային պայմաններում արհեստաւորները պատրաստում էին պարզունակ կառուցուածքով գորգագործական դազգահներ, որոնք միանգամայն տարբեր չափսեր ունէին։ Արցախի Պետական Պատմաերկրագիտական Թանգարանում պահուող գորգագործական դազգահը պատրաստուած է ԺԹ. դարի սկզբներին։ Առաւել մեծ գորգերի կամ կարպետների համար պատրաստում էին համեմատաբար մեծ չափերի դազգահներ։

Ազգային անկախ պետականութեան հաստատումից յետոյ Արցախում նոր վերածնունդ է ապրել գորգագործութիւնը։ Ստեղծուել են գորգագործական նոր գործարաններ, որոնց հիմնական նպատակն է վերականգնել հայկական գորգագործական արուեստին բնորոշ աւանդոյթները։

Արցախի Պետական Պատմաերկրագիտական Թանգարանի ձեռագործի հաւաքածու ընդգրկուած ձեռագործ գորգերի ու կարպետների թիւը մեծ չէ՝ ընդամէնը 125 հատ։ Սակայն դրանք բազմագան ու բազմատիպ են եւ ներկայացնում են Արցախի գորգագործական արհեստի գրեթէ բոլոր տիպերը՝ «Արծուագորգ», «Ջրաբերդ», «Գետաչէն», «Թագ», «Օձագորգ», «Խաչխորան», «Վիշապագորգ», «Յլագորգ», «Ղարաբաղ» եւն.։ Դժբախտաբար ներկայիս Թանգարանում պահպանուած ամենահին գորգը վերագրւում է ԺԸ. դարի վերջին։ Գորգը, թէկուզեւ հնամաշ ու կիսուած է երկու մասի, բայց պահպանուած են զարդանախշերն ու գունային երանգները։ Թուագրուած ամենահին գորգը 1818 թուականից է եւ ընդհանրապէս Թանգարանի գորգերի հիմնական մասը ԺԹ. դարին է պատկանում։

Հարկ է ընդգծել, որ խորհրդային ողջ ժամանակահատուածում Թանգարանի գորգերի հաւաքածուն հաշւում էր ընդամէնը 10 ձեռագործ գորգ, իսկ մնացածը առանձին յոբելեանական տարեդարձների կապակցութեամբ գործուած ժամանակակից գորգեր էին։ Թանգարանի ներկայիս գորգերի հաւաքածուի հիմնական մասը ձեռք է բերուել Լեռնային Ղարաբաղի Հանրապետութեան անկախութեան հռչակումից յետոյ, գնումների ու նուիրատուութիւնների միջոցով, մի գործընթաց, որ այսօր էլ շարունակւում է։ Սակայն ներկայիս արցախեան ձեռագործ գորգերի հաւաքածուի համալրման հիմնական խոչընդոտը պահպանուածների չափազանց սակաւաթիւ լինելն է։

Թանգարանում պահւում են նաեւ ինչպէս խորհրդային, այնպէս էլ նոր ժամանակների յոբելեանական ձեռագործ գորգեր, ինչպէս օրինակ Հայաստանում քրիստոնէութեան պետական կրօնք հռչակման 1700ամեակի կապակցութեամբ գործուած եւ Ս. Էջմիածնի կողմից Թանգարանին նուիրուած «Ս. Էջմիածին», Արցախի մերօրեայ նշանաւոր գորգագործուհի Արուսեակ Կոնստանդեանի կողմից Շուշիի ազատագրման առիթով 1992ին գործուած «Ս. Ղազանչեցոց. Աստուած, խնդրում եմ օգնիր արցախցիներին. Արցախը հայերին, հայեր միացէք» մակագրութեամբ գորգերը, որոնք նոյնպէս պատմական արժէք են ներկայացնում։

Ներկայիս Թանգարանի մշտական ցուցադրութեան են ներառուած ընդամէնը ութ գորգեր, որոնց հետ նաեւ կարպետներ, անկողնապարկեր, խուրջիններ, աղաքսակներ։ Ջնայած քաղաքական խոչընդոտներին, յաջողուել է Թան-

գարանի գորգերը ներկայացնել արտասահմանեան ցուցահանդէսներում։ 1997ին Ֆրանսիայի Փարիզ, Մարսէյ եւ Լիոն քաղաքներում կազմակերպուել են «Արցախի Պետական Պատմաերկրագիտական Թանգարանի Գորգերը» ցուցահանդէսները, որոնց վերաբերեալ եղել են մի շարք հրապարակումներ տեղի մամուլում։ Թանգարանի գորգերի ու կարպետների հաւաքածուի ցուցահանդէսներ տարբեր առիթներով կազմակերպուել են նաեւ հենց Թանգարանի ժամանակաւոր ցուցահանդէսների համապատասխան սրահում, ԼՂՀ Մշակոյթի եւ Երիտասարդութեան Հարցերի Պալատում, Ամարասի վանքում եւն.։

Արցախի Պետական Պատմաերկրագիտական Թանգարանի գորգերի ու կարպետների ամբողջական հաւաքածուն ներկայ դրութեամբ ներկայացնում է Արցախի բազմադարեան պատմամշակութային ժառանգութեան կարեւորագոյն ուղղութիւններից մէկը՝ գորգագործական արուեստը, հայկական գորգարուեստի համակարգում ունեցած իր տիպաբանական առանձնայատկութիւններով ու ընդհանրութիւններով հանդերձ։

ԾԱՆՕԹԱԳՐՈՒԹԻՒՆՆԵՐ

---

[1] Սորաբոն, Օտար Աղբիւրները Հայաստանի Մասին, # 1. Յունական Աղբիւրներ, քաղեց եւ թարգմ. Հրաչեայ Աճառեան, Պետական Համալսարանի Հրատ., Երեւան, 1940, էջ 11, 55։

[2] Մովսէս Խորենացի, Պատմութիւն Հայոց, քնն. բնագ. եւ ներած.՝ Մ. Աբեղեան եւ Ս. Յարութիւնեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1991, էջ 113։

[3] V. V. Bunak, “Antropologicheskii Sostav Naseleniya Kavkaza” (Կովկասի բնակչութեան մարդաբանական կազմը), *Vestnik Gos. Muzeya Gruzii*, Հտր. 13A, 1946, էջ 94:

[4] Է. Ռէօսլէրը Շուշիի Ռէալական Դպրոցի տեսուչն էր, հնագէտ չէր, այլ սիրողական մակարդակով էր հնագիտական աշխատանքներ իրականացնում։

[5] Ռ. Վիրխով, «Կովկասի Տեղը Քաղաքակրթութեան Պատմութեան Մէջ», Ազգագրական Հանդէս, 1895, էջ 66։

[6] Ա. Իսրայէլեան, Կուլտուրան Եւ Հաւատալիքները Հայաստանում Ուշ Բրոնզի Դարաշրջանում, Երեւան, Հայպետհրատ, 1976, էջ 36։

[7] Մովսէս Կաղանկատուացի, Պատմութիւն Աղուանից Աշխարհի, քննական բնագիրը եւ ներած.՝ Վ. Առաքելեան, Երեւան, ՀՍՍՀ ԳԱ Հրատ., 1983, էջ 224։

[8] Կիրակոս Գանձակեցի, Պատմութիւն Հայոց, աշխ. Կ. Մելիք-Օհանջանեանի, Երեւան, ՀԽՍՀ ԳԱ Հրատ., 1961, էջ 215։

[9] Նոյն։

[10] Մեծ Հայքի Ուտիք նահանգի Տաւուշ գաւառի մեծ մասը, ներառեալ թուրքերի կողմից «Թոուզ» վերանուանուած հին հայկական Տաւուշ բնակավայրը, ներկայումս բռնազաւթուած է Ադրբէջանի կողմից։ Տեղին է նշել նաեւ, որ քաղաքական հանգամանքների բերումով, յատկապէս Ե. դարից սկսած, հին հայկական Արցախ եւ Ուտիք նահանգները գրեթէ միաւորուած են հանդէս գալիս, որի համար հիմնական պատճառներ են հանդիսացել քաղաքական, կրօնական ու էթնիկական գործօնները։

[11] Հրաւարդ Յակոբեան, Արցախի Միջնադարեան Արուեստը, Երեւան, «Պարբերական», 1991, էջ 21։

[12] Հերոդոտոս, Պատմութիւն Ինը Գրքից, թրգմ. եւ ծանօթ. Ս. Կրկեաշարեան, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան 1986, էջ 83։

[13] Վ. Ս. Թեմուրճեան, Գորգագործութիւնը Հայաստանում, Հայկ. ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1955, էջ 67։ Մեր կարծիքով Կիրակոս Բանանցեցին ոչ թէ անմիջական գործողն

էր, այլ պատուիրատուն, ու պարզապէս կանայք գործել են՝ իր անունից նուիրելու նպատակով։

[14] Նոյն, էջ 9։

[15] Տե՛ս՝ Սէրիկ Դաւթեան, Դրուագներ Միջնադարեան Հայաստանի Կիրառական Արուեստի Պատմութեան, Հայպետհրատ, Երեւան, 1977, էջ 128-129։

[16] Ստեփան Լիսիցեան, Հայ Ազգագրութիւն, Հայկական ՍՍՀ ԳԱ Հրատ., Երեւան, 1981, էջ 80։

[17] Երուանդ Լալայեան, Ազգագրական Հանդէս, Բ. գիրք, Թիֆլիս, 1897, էջ 96։

[18] Նոյն։

[19] Վահրամ Թաթիկեան, Արցախի Տոհմագորգերը, «Լուսաբաց», Երեւան, 2004, էջ 90։

[20] "The important role Armenians have played in rug culture and more specifically in Caucasian rug weaving through the ages" (Jim Allen, Armenian Rugs Without Inscriptions, http://www.kunstpedia.com/articles/66/1/Armenian-Rugs-Without-Inscriptions/Page1.html).

[21] L. Kyarimov, *Azerbaydjanskii Kover* (ադրբեջանական գորգը), Մոսկուա 2, Gyandjlik Հրատ., Բաքու, 1983։

[22] Նոյն, էջ 10. նաեւ՝ K. Vilson, "Tarikhe Sanae-e Iran", 1938, Թեհրան. նաեւ՝ A. Powp, *Barrasikhaye Tarikhi*, Թեհրան, 1949, N 3:

[23] Նոյն, էջ 26։

[24] Նոյն, էջ 14-16։

THE HANDMADE CARPETS AT THE STATE HISTORICAL AND GEOLOGICAL MUSEUM OF ARTSAKH AND THE AZERI CLAIMS

(Summary)

MELANYA BALAYAN

In this paper the author argues that the culture of the Artsakh region is closely identified with the culture of the Armenian Plateau, of which Artsakh was considered a part by Strabo and other geographers and historiographers of the past.

The author bases her argument on cultural artifacts, specifically the Artsakh carpets, which she closely relates to the carpet production of the Armenian Highland, both in quality of weaving, style, loom, color and design.

The author defines the characteristics of the Artsakh carpets and groups them according to their different designs as Odzagorg (Snake carpet)/Khendzoresk, Artsvagorg *(eagle carpet)/Arevagorg, Vishapagorg (dragon carpet), etc.

In this context she refutes Azeri claims that Artsakh and its culture are part of Azerbaidjan and its culture. The author rejects Azeri claims and notes that during Soviet rule the Baku authorities sent several expeditions and systematically collected the native carpets of Artsakh exchnging them for new ones produced in the Baku carpet factories.

As proof of this, the author notes that the State Historical and Geological Museum of Artsakh, which was founded in 1939, had only ten carpet specimens displayed during the Soviet era, while after the self-proclaimed independence of Artsakh, the Museum had 68 carpets and 78 *kilim*s, the oldest dated 1818.